նաց բերել առ նախարարն, և նախարարն հանեսցի Օրինակ թղթոց որ քան որ իցէ և ծածկաբար ընծայեսցէ առ սպան հայրապետի խընդրելով դատաստան արդարութեան և հրաման շնորհաց զի արձակեսցի նոցայ և նոքայ ելցեն առ 'ի ամուսնութիւն և լիցին իբրև աշխարհակոն։

ԳԼՈՒԽ ՅԶԷ.

Որպէս Օրէն է մեզ 'ի ժամանակն պատերազմի ընդ ումեք թշնամւոյ մերոյ որ ոք ամրոց շէնք և բանակ ընդ պատերազմաւ ստացեալ զամենայն ինչս 'ի նմայ աւար զօրաց մերոց լինիլ, այլ անդրադարձն սորայ զոր ինչ գտաւոր, գեօղարէնք և շէն թշնամեաց 'ի ժամ պատերազմի առանց ընդդիմամարտութեան հնազանդելոյ մերոյ զօրաց պահպանութիւն մեր 'ի վերայ նոցայ և 'ի վերայ ընչից նոցայ լինիցի, վասն որոյ պարտ է պահպանել նոցայ իբր և ժողովուրդ մեր և թոյլ տալ նոցա կալ և մնալ 'ի տեղի իւրեանց ազատապէս վայելել ինչս իւրեանց միմիայն հարկ և մաքս և հաս և բաժին որ տալոց էին տերանց իւրեանց՝ տացեն մեզ և մնասցեն իբր մեր ժողովուրդ, զամենայն ժամանակս մինչ կալով մնասցէ բանակ և իշխանութիւն մեր անդ, և 'ի ժամ չուելոյ բանակին մերոյ անտի, ոչ ոք 'ի մէնջ ունիցի արձակութիւն գերել նո-